ՄՍՄՆԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Միեր Հարությունյան

Բանալի բառեր՝ *Սմմնա, թուրք զավթիչներ, Արցախ, հայ պատմագրություն, Ասլան Մուրադխանյան, ճակատամարտ, Արտեմ Լալայան, ռազմարվեստ, զորաշարժ, գիտական խնդիր:*

Թեև մեկ դար է անցել 1918 թ. հոկտեմբերից, բայց ամենևին չի թուլացել հետաքրքրությունը Արցախի Կարանդայի գավառի Սմմնա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտի նկատմամբ: Դա պայմանավորված է Առաջին համաշխարհային պատերազմի վերջում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունից օգտված թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի ինքնապաշտպանության համապատկերում այդ ճակատամարտի նշանակությունը վերահմաստավորելու և Արցախում ռազմարվեստի զարգացման դինամիկան ցույց տալու անհրաժեշտությամբ:

Թուրք զավթիչների Անդրկովկասում ունեցած ռազմաքաղաքական ներկայության պայմաններում Արցախում հայ ազգաբնակչության ինքնապաշտպանական մարտերը, այդ թվում՝ Սմմնայի ճակատամարտը հայ պատմագրությունը ներկայացրել է որպես փրկության փարոս և Հայրենիքը պաշտպանելու վառ օրինակ:

Նախորդ հարյուրամյակի 20-30-ական թվականներին Սփյուռքում լույս տեսնող պարբերականներում տպագրվել են նաև Արցախում 1917-1921 թթ. տեղի ունեցած դեպքերի մասին հուշագրություններ[1], որոնցում բերված առանձին տեղեկությունների շուրջ հաճախ ծավալվում էին բանավեճեր:

Այն ժամանակվա գործիչների արխիվներում պահվող անտիպ հուշագրությունները հետագայում լույս են տեսել առանձին գրքերով[2]:

Հայ պատմագրության մեջ նկատելի տեղ է հատկացված Արցախում 1917-1921 թթ. իրադարձությունների լուսաբանմանը: Պատմագրական բնույթի աշխատությունների ընդարձակ ցանկից առանձնացրել ենք մասնավորապես Սմմնայի ճակատամարտին անդրադարձած հեղինակների գործերը[3]:

Տեղեկություններ կան նաև այդ ժամանակամիջոցում ստեղծված վավերագրերում, որոնք հայ պատմաբանները և արխիվագետները զետեղել են իրենց կազմած փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներում[4]:

Դեպքերի ականատեսների ու Արցախի ինքնապաշտպանության գործի կազմակերպիչների կամ մասնակիցների հուշագրություններում Սմմնայի ճակատամարտի մասին տեղեկությունները հաճախ հակասական են: Այդ տարակարծությունը հետագայում ժառանգություն է մնացել հայ պատմագրությանը: Կարծում ենք, որ հրատապ են մեկդարյա հեռավորությունից Սմմնայի ճակատամարտի պատմագրության հիմնահարցերն ընդհանրացնելը և հրապարակված հիմնական նյութի պատմաքննական վերլուծությամբ այդ իրադարձության ամբողջական պատկերը հնարավորինս հստակեցնելը:

Սմմնայի ճակատամարտի պատմագիտական վերահմաստավորման անդրանիկ փորձերի հեղինակներից է Գ. Հովհաննիսյանը[5]: Նա գրել է թուրքական հրամանա-

---

* Հոդվածն ընդունվել է 20.08.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ Պատմության և քաղաքագիտության ամբիոնը: 09. 09. 19:
Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ նախարարության տրամադրած ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 18 AK-007. «Ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները Արցախում» գիտական թեմայի շրջանակներում:

տարության Վարանդա ուղարկած Քյազիմ բեյի մասին, որը «հասնելով Հաղորտի գյուղը և համոզվելով թուրք զավթիչների նկատմամբ հայ գյուղացիների դիմադիր վերաբերմունքի մեջ, կես ճանապարհից ետ փախավ Շուշի: Չարությամբ լցված Հաղորտի, Ճարտար գյուղերի բնակիչների նկատմամբ, որոնք չէին համաձայնվել ենթարկվելու թուրքական բռնությանը, Քյազիմ բեյը որոշեց խիստ պատժել նրանց ըմբոստությունը»[6]:

Քյազիմ բեյին թուրքական զորաջոկատի հրամանատար է համարել նաև Հրաչիկ Սիմոնյանը: Պատմաբան Հրանտ Աբրահամյանը, անդրադառնալով այդ հարցին, ճիշտ չի համարել Զահիդ կամ Քյազիմ բեյերին Մսմնայի մոտ ջախջախված թուրքական ստորաբաժանման հրամանատար ներկայացնող տեղեկությունները, որովհետև առաջինը «Արցախ-Ղարաբաղ ներխուժած ուժերի ընդհանուր հրամանատարն էր», իսկ երկրորդը «ինչպես իմացանք, այդ ժամանակ Կարյագինոյի պարետն էր, որը 1918-1919 թվականներին ղեկավարել է Գորիսի և Կապանի ուղղությամբ կազմակերպված հարձակումները»[7]: Նշելով, որ տարբեր հեղինակներ տարբեր կարծիքներ են հայտնել՝ պատմաբանն այդպես էլ չի հստակեցնում, թե ինչ հիմնավորմամբ որ տեսակետն է ճիշտ կամ ընդունելի: Դրա փոխարեն իր հետագա հրատարակություններում պարզապես նշում է Փ/Ֆոլատովին՝ որպես հրամանատար: Ըստ երևույթին նա համամիտ է «այդ ժամանակ Արցախի ***ռազմական ուժերի ղեկավար*** *Հարություն Թումյանի, Քիրս Սարոտի, Աբրահամ Կիսիբեկյանի և ուրիշների» (ընդգծումը մերն է.- Մ. Հ.) այն վկայություններին, թե «Վարանդայի վրայով Կարյագինո շարժվող թուրք-թաթարական զորամասի հրամանատարը եղել է Բաքվի և Արցախի հայ բնակչության դեմ գործադրված վայրագություններով հայտնի Խոսրով-բեկ Փոլատովը»[8]:*

Ճակատամարտի մանրամասներին անդրադարձած պատմաբան Հ. Աբրահամյանը[9] փորձել է հակասական տեղեկությունները քննության առնելու նմանակում անել, սակայն, ապարդյուն: Որպես կանոն, ընդամենը արձանագրվել են որոշ տեսակետներ, սակայն որևէ եզրակացություն, պատմագրության համար պիտանի հետևություն այդպես էլ չեն արվել: Ասվածի առնչությամբ որևէ կասկած կամ վերապահում չի մնում պատմաբանի գրածներն աչքի անցկացնելուց հետո: Այսպես՝ Թևան Ստեփանյանի մասին գրված մի հոդվածում, արծարծելով Մսմնայի ճակատամարտին նրա մասնակցության հարցը, Հրանտ Աբրահամյանը գրել է. «Կա միտում, թե իբրև 1918 թվականի հոկտեմբերին Վարանդա ներխուժած թուրքերի Մսմնա գյուղի մոտ ջախջախման գործը ղեկավարել է Թևան Ստեփանյանը» [10]: Դրա օգտին խոսող միակ սկզբնաղբյուրը պատմաբանը վկայակոչել է «1917-1921 թթ. Արցախում տեղի ունեցած իրադարձություններին քաջատեղյակ» Աբրահամ Կիսիբեկյանի հուշերը (ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 75): Պատմաբանի խոստովանությամբ «Մսմնայի հերոսամարտի մասին որոշ առիթներով խոսած Լեոն, Դավիթ Անանունը ժամանակակից ռազմական գործիչներ Հարություն Թումյանը, Արտեմ Լալայանը, Հովակ Ստեփանյանը ևս չեն հիշատակում Թևանի անունը» [11]: Այնուհետև, պատմաբանի այն հետևությունից, որ «1918 թ. մինչև 1920 թ. ամառն ընկած ժամանակաշրջանում Թևան Ստեփանյանը, առաջին աշխարհամարտից վերադառնալուց հետո, Թաղլար-Տումի ենթաշրջանում կազմակերպում է մի ջոկատ և այդ ձորակի հայկական գյուղերը պաշտպանում հարևան մահմեդական բնակավայրերից և Կարյագինոյից անընդհատ կրկնվող ավազակային հարձակումներից» [12], կարելի է ենթադրել, որ Թևան Ստեփանյանը չի մասնակցել Մսմնայի ճակատամարտին: Սակայն, հետագայում քաջարի մարտիկին նվիրված գրքույկում պատմաբանը միայն մեջբերում է Աբրահամ Կիսիբեկյանի վերոհիշյալ վկայությունը և պնդում, որ «Մսմնայի ճակատամարտին «...» մասնակցում է նաև Թևան Ստեփանյանը, որը ռազմադաշտ էր հասել վճռական պահին» [13]: Ի դեպ, նույն գրքույկում արտատպելով «Նորք» հանդեսում (1990, N 6, էջ 83-93) Հայկազն Ղահրիյանի հրապարակած «Թևանի հարցաքննությունից» վավերագիրը՝ պատմաբանը Թևանի «Մսմնա գյուղի

մոտ ջախջախեցինք թուրքական գունդը, որից մի քանի մարդ ողջ մնաց[14]» արտահայտությունից չէր կարող միանշանակ եզրակացնել, որ Թևանը անձամբ ղեկավարել կամ մասնակցել է ճակատամարտին, մանավանդ, որ պարբերության խորապատկերի վրա դա հստակ չի երևում: Սակայն դա չի խանգարել պատմաբանին իր հետագա հրատարակություններում ավելի համոզված պնդելու Մսմնայի ճակատամարտին Թևան Ստեփանյանի մասնակցությունը[15]:

Ի դեպ, հարկ է նշել, որ ժողովրդական բանահյուսության մեջ կան բազմաթիվ պատումներ Թևանի, այդ թվում՝ Մսմնայի ճակատամարտին նրա մասնակցության մասին, սակայն, թե ինչքանով են դրանք համապատասխանում իրականությանը, դժվար է ասել: Մեզ դեռ հայտնի չեն ճակատամարտին Թևան Ստեփանյանի մասնակցությունը, առավել ևս, ղեկավարելու հանգամանքը հաստատող վավերագիր կամ անառարկելի փաստարկ:

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Թվում է, թե ժամանակի մամուլը հեղեղված պիտի լինի այդ կարևոր իրադարձության մասին օպերատիվ տեղեկատվությամբ և անդրադարձներով: Սակայն, կա՞մ դրանք մեզ չեն հասել, կա՞մ էլ նախորդ ուսումնասիրողները դրանք դեռևս գիտական շրջանառության մեջ չեն դրել: Մսմնայի ճակատամարտի մասին ժամանակի պարբերական մամուլում խորհրդավոր լռության պատճառների վրա լույս է սփռում Եղիշե Իշխանյանի հետևյալ վկայությունը. «Քաղաքագլուխը (Գերասիմ Մելիք-Շահնազարյանը.- Մ. Հ.) բնաւ գոհ չէ եղած Սոկրատ բէկի ընթացքից, մանաւանդ Մսմնայի կռուից յետոյ, խիստ վրդովուած էր եւ քանիցս խրատական նամակներ էր գրել, զգաստութեան եւ ողջախոհութեան հրաւիրել նրան եւ խորհուրդ տուել՝ հանգիստ մնալու» [16]:

Այս մեջբերումից կարելի է հետևություն անել, որ Շուշիի ղեկավարությունը դեմ էր թուրք զավթիչներին դիմադրություն ցուցաբերելուն և ահասարսուռ խուճապի մեջ էր Մսմնայի ճակատամարտի հնարավոր հետևանքներից: Թերևս այս տարակարծության և Շուշիում Թուրքիայի օկուպացիոն զորքերի առկայության պատճառներով Մսմնայի ճակատամարտի մասին տեղեկույթ չենք գտնում ժամանակի պարբերական մամուլում:

Մսմնայի ճակատամարտի հանգամանքներն ուսումնասիրած Վլադիմիր Գասպարյանը կարծում էր, թե «թուրքական կանոնավոր բանակի զորախմբերի դեմ տարած փայլուն հաղթանակի մասին առաջին անգամ հիշատակվել է դեռևս 1918 թ. դեկտեմբերին, Թիֆլիսում «…» հրատարակվող «Кавказский вестник» հանդեսում» [17]:

Սակայն մեզ հաջողվել է գտնել ավելի վաղ հիշատակություն Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» լրագրում, որտեղ թուրք զավթիչներից զինված ինքնապաշտպանության մասին հաղորդվել է հետևյալը. «Շուշու գաւառի Ճարտար գիւղի տակ թիւրքերը երկրորդ անգամ խոշոր ջարդ են կրել. Ճարտարեցիք խլել են թիւրքերից թնդանոթ և գնդացիրներ: Քաղաքում, բացառութեամբ մի բանւորի, բոլոր բանտարկեալներն ազատ են թողնված: Զօրք քաղաքում շատ քիչ է մնացել: Անդրանիկը ստւար բանակով Զանգեզուրից շարժվել է դէպի Շուշի» [18]

Ըստ երևույթին, Բաքվում լույս տեսնող «Արեւ» գրական, հասարակական և քաղաքական օրաթերթի հրապարակումը, որն արտատպել է Հ. Աբրահամյանը, փաստում էր. «Հայկական ուժերը թշնամուն շրջապատում են Մսմնայի մոտ: Երեկոյան ժամը 6-ն էր արդեն, վերջնագիր է ուղարկվում թշնամու բանակ՝ Ճեմալ բեյին անձնատուր և զինաթափ լինելու»: Վերևում արդեն խոսք է գնացել Ջամալ բեյի՝ օսմանյան զորաջոկատի հրամանատար լինելու վարկածի անհավանական լինելու մասին: Բայցևայնպես, թերթը նրան է վերագրում վերջնագրի մերժումը՝ պատճառաբանելով. «քանի որ բավական թվով զինված ուժեր ուներ իր տրամադրության տակ և կապված էր Աղդա-

մում գտնվող բրիգադայի հետ»: Ճակատամարտի մասին թերթը հաղորդել է ակնհայտ ընդհանրական բնույթի հետևյալ տեղեկությունը. «Ճայթում է կռիվը և շարունակվում մինչև լուսաբաց: Թշնամու մնացած սակավաթիվ ուժերը փախչում են ապահով տեղ»: Անդրադառնալով ճակատամարտի արդյունքներին՝ թերթը բերել է հետևյալ տեղեկությունները. «սպանվում է [են] ճեմալ բեյի օգնականը, 300-ի չափ ասկյարներ և խլվում 3 թնդանոթ, 4 գնդացիր և 30 բեռ փամփուշտ իրենց ջորիներով»[19]:

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ ճակատամարտն այնքան մեծ արձագանք է գտել Արցախում և նրա սահմաններից դուրս, որ ժողովուրդը տարբեր պատմություններ ու առասպելներ է հյուսել դրա մասին, որոնք բերնեբերան փոխանցվում են առայսօր:

Հայկազն Ղահրիյանը Մարտունու շրջանի Մսմնա գյուղի մոտ տեղի ունեցած զինված ընդհարումը համարել է «առաջինը Թևանի ջոկատի և օսմանյան հրաձգային գնդի միջև, որը շարժվում էր դեպի Ճարտար հայկական մեծ գյուղը»: Նույն հեղինակը հիշարժան է համարել նաև Մարտունու շրջանի Հերհեր գյուղացի Գերասիմ բեկին, որը «հանձն է առնում ուղեկցել օսմանյան գունդը, տանում-մտցնում է մի ձոր և իր դարանակալած խմբով մեծամեծ կորուստներ պատճառում թուրքերին» [20]:

Պատմաբան Հ. Աբրահամյանը վկայակոչելով հաղորտեցի Գրիգոր Գրիգորյանին և Մսմնա գյուղի բնակիչ Սողոմոն Բաբ[ա]յանին՝ նշել է, որ «թուրքական զորամասին Մսմնայի ուղղությամբ գիտակցաբար շեղել է Հեյբաթյանը, այդ մասին նախօրոք տեղյակ պահելով հայկական աշխարհազորի հրամանատարությանը»: Դրանից բացի, ըստ նրանց պատմածի Հեյբաթյանը կարևոր տեղեկություն է հայտնել հակառակորդի երթուղու մասին. «Նա նաև զգուշացրել է, որ զորամասը Մսմնայից կշարժվի Ղավախան-Հաղորտի ուղղությամբ՝ դուրս գալու Ճարտար-Կարյագինո ճանապարհը» [21]:

*Լրագրող Էռնեստ Եսայանը կարծում է, թե Արտեմ Լալայանի հանձնարարականով Ասլանիկը (Ասլան Մուրադխանյանը) «երկու օրվա մեջ հավաքագրում է շուրջ 500 զինյալի»: Նրա կարծիքով՝ մարտերը տևել են երկու օր. «**Երկօրյա մարտերից** հետո թշնամին ջախջախվում է՝ թողնելով **մի քանի հրանոթ, տասնյակ գնդացիրներ** [22], մեծ քանակությամբ զենք ու զինամթերք» (ընդգծումը մերն է.- Մ. Հ.):*

Թուրքական ստորաբաժանումը ջախջախելուց հետո, բնականաբար, Արտեմ Լալայանը պետք է միջոցներ ձեռնարկեր Շուշիում հաստատված թուրքական զորքերի նոր արտագրոհները կասեցնելու համար: Նրա հրամանով հայկական ուժերը դիրքավորվել են, ինչպես փոխադրել է Է. Եսայանը, «Հարավ-Նգի-Տռնավազ(Կարմիր գյուղ)-Չանախչի (Ավետարանոց) լեռնաբաժան գծով՝ թույլ չտալու թշնամուն մտնելու Վարանդա և Դիզակ»: Այդ կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը շուտով տվեց իր արդյունքը. ինչպես նույն հեղինակն է կարծում՝ «թուրքական շուջ 1000 հոգանոց նոր զորամիավորումը հենց առաջին թեթև ընդհարումից[23] ետ է ճողոպրում Շուշի» [24]:

Առասպելանման պատմություններ և այլազան տեղեկություններ են գրառել ու հրատարակել նաև այլ հեղինակներ[25]:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Կարծում ենք, որ հստակեցման անհրաժեշտություն ունեցող հարցերից մեկը ճակատամարտի դրդապատճառն է: Միանշանակ գլխավոր պատճառը թուրքական ինտերվենցիան էր Այսրկովկաս: Հետևաբար Մսմնայի ճակատամարտը կարելի է համարել Արցախ ներխուժած թուրքական զորքերի դեմ հայ ազգաբնակչության ինքնապաշտպանության իրավունքի իրացման արտահայտություններից մեկը:

Թուրքական հրամանատարության ռազմավարական նպատակը դիպուկ է բնութագրել ժամանակակիցը՝ ռազմական կոմիսար Հարություն Թումյանը տարիներ անց գրած իր հուշագրական բնույթի աշխատությունում. «Նրանց հիմնական նպատակը՝ մինչև Բրեստի պայմանագրով նշված սահմանները զորքերը հետ տանելը Ադրբեջանի սահմանները հայկական հողերով, մասնավորապես Ղարաբաղը և Զանգեզուրը միացնելով, ընդարձակելու խնդրի լուծումն էր[26]»:

Արցախը նվաճելու և հայկական տարածքներում Ադրբեջան պետություն ստեղծելու Թուրքիայի նկրտումներին կազմակերպված դիմադրություն ցուցաբերած Խաչենի, Վարանդայի, Դիզակի, Զրաբերդի ինքնապաշտպանական ուժերի համաձայնեցված գործողությունները խափանելու նպատակով թուրքական հրամանատարությունը հիշյալ ուղղություններով ձեռնարկեց հարձակողական գործողություններ: Խաչենի սահմանամերձ գյուղերի պաշտպանությունը ձախողվեց Շուշիում ձևավորված կառավարության պարտվողական դիրքորոշման պատճառով, իսկ Դիզակում և Զրաբերդում հայ ազգաբնակչության ինքնապաշտպանության ուժերը հակահարված տվեցին թշնամուն ու հետ շպրտեցին Արցախի սահմաններից:

Կարծում ենք՝ որպես այդ ճակատամարտի անմիջական նախաձեռնող՝ Դիզակի ուժերի հրամանատար Արտեմ Լալայանն ավելի արժանահավատ տեղեկություններ է հաղորդել իր հուշերում[27] որոնցից առանձին հատվածներ հրապարակել է արձակագիր Սերո Խանզադյանը[28]:

Արտեմ Լալայանը որպես ճակատամարտի առիթ ներկայացրել է Կարյագինոյի փաշայի Շուշիից զորք բերելու սպառնալիքը: Դա չեզոքացնելու նպատակով Ա. Լալայանը մտահղացել է Շուշիից հրավիրված կանոնավոր ուժերը Վարանդայում ջախջախելու ծրագիրը, նախքան դրանք կմիանային թուրքական մյուս ուժերի հետ և կհարձակվեին Դիզակի ու Վարանդայի վրա[29]: Որպես հեռատես ռազմական գործիչ՝ Ա. Լալայանը վճռել էր կանխել նախապատրաստվող հարձակումը Դիզակի վրա՝ հակառակորդի ուժերի միավորումը խափանելու և առաձին-առանձին ջախջախելու եղանակով:

Ա. Լալայանի նախապատրաստական աշխատանքներից էին իր տեղակալ Ասլան Մուրադխանյանին «երկու բեռ փամփուշտով և քսան քաջ զինվորներով» Վարանդա ուղարկելը և Դիզակի ու Վարանդայի շրջաններից այլ քաջեր հավաքագրելու լիազորություն տալը, ինչի շնորհիվ վերջինս հավաքագրել է «մոտ 120 քաջ զինվորներ» [30]:

Պատմաբան Գ. Հովհաննիսյանը, խոսելով թուրքական ինտերվենցիայի մասին, գրել է. «Թուրք զավթիչների՝ Անդրկովկաս ներխուժելուց հետո, երբ Նուրի փաշան ձեռնարկեց իսլամական բանակի կազմակերպմանը Գանձակում, բավականին լուրջ վտանգ ստեղծվեց ոչ միայն հայկական Ղարաբաղի ինքնուրույնության, այլև նրա բնակչության ֆիզիկական գոյության համար»: Տեղին է նկատվել, որ «վտանգն ավելի մեծացավ, երբ սեպտեմբերի 15-ին Բաքուն զավթելուց հետո անմիջապես Ղարաբաղ ուղարկվեց օսմանյան երկրորդ դիվիզիան՝ Ղարաքիլիսայի ոճրագործության հեղինակ Զամիլ Զահիդ բեյի հրամանատարությամբ[31], նպատակ ունենալով տիրանալ ողջ [ամբողջ] Լեռնային Ղարաբաղին «...»[32]:

Այստեղ տեղին է անդրադառնալ առանց դիմադրության Շուշիի հանձնման պատճառով քաղաքի ու գավառի միջև առաջացած վիհին: Գավառը Շուշիի կառավարությանը մեղադրում էր դավաճանության մեջ և լի էր թշնամուն զինված դիմադրություն ցույց տալու և հայրենիքը պաշտպանելու վճռականությամբ: Մամնայի ճակատամարտում գավառի մարտունակ ուժերն ապացուցեցին, որ թշնամուն հաղթելու անհնարինության (զենքի ու զինամթերքի պակասի պատճառաբանությամբ) առասպելը ընդամենը Արցախի ղեկավար շրջանակների մեծամասնության կարճատեսությունը և անվճռականությունը սքողելու համար է տարածվել:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՎԱՅՐԻ ՀԱՐՑԸ

Իր ինքնակենսագրականում Արտեմ Լալայանը գրել է. «Ասլանիկը թուրքական զորքին հետապնդում է մինչև Մսմնա գյուղի մոտի լեռնագոգը» [33]: Աբրահամ Կիսիբեկյանը գրել է. «Ընդունվում է Հեյբաթյանի առաջարկը[34], և գունդը (տաճկա-ադրբեջանական) կազմ ու պատրաստ, զինվորական բոլոր կանոններով գյուղից (Մսմնայից.- Մ.Հ.) դուրս է գնում» [35]: Հովակ Ստեփանյանը[36] և Եղիշե Իշխանյանը[37] նշել են «Մսմնայի(Ասմնայի ձևն ուղղակի վրիպակ է: Հրապարակման շարունակության մեջ այն շտկվել է.- Մ. Հ.) ձոր»:

Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղի տարեցները պնդում էին, թե թուրքական զորքերն անցել են ձորը և հասել իրենց գյուղի տարածքում գտնվող Ձրատափեր տեղամասը, որտեղ նրանց շրջապատել և ջախջախել են հայ աշխարհազորայինները[38]:

Ճակատամարտի վայրը «Ձրատափեր» տեղամասն են համարել նաև այլ հեղինակներ[39] ու ժամանակակիցներ[40]:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հակասական են նաև ճակատամարտի արդյունքների մասին ականատեսների, ժամանակակիցների ու պատմաբանների տեսակետները: Ջախջախված հակառակորդից խլված սպառազինությունը, ըստ սկզբնաղբյուրների և ուսումնասիրողների, հետևյալն է. մեկ թնդանոթ[41] և երեք գնդացիր[42], առանց կոնկրետ թվերի՝ թնդանոթներ և գնդացիրներ[43], երկու թնդանոթ և գնդացիրներ[44], երկու թնդանոթ և երկու գնդացիր[45], երեք թնդանոթ և չորս գնդացիր[46]: Արդեն իսկ 20-րդ հարյուրամյակի 20-30-ական թվականներին որոշ հարցերի շուրջ տարաձայնություններ եղել են: Արցախի Ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը, ճշտգրտումներ անելով Քիրս Սարոտի հրապարակումների առթիվ, գրել է. «Մսմնայի (իմա՝ Մսմնայի. Մ. Հ.) կռւում տաճիկները կորցնում են ընդամէնը 231 հոգի եւ ոչ թէ 400 հոգի(«Յուս.», թիւ 247), թողնելով մեր ձեռքը փչացուած 2 լեռնային թնդանօթ եւ 4 գնդացիր» [47]: Դիզակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արտեմ Լալայանը ինքնակենսագրականում նշել էր. «Այդտեղ(Մսմնա գյուղի մոտ.-Մ.Հ.) նա (Ասլանիկը՝ Ասլան Մուրադխանյանը.-Մ.Հ.) ջախջախեց նրանց (թուրքական զորքին) ու երկու թնդանոթ[48] ավար վերցնելով՝ բերեց Հադրութ և հանձնեց ինձ» [49]: Այս տեղեկությանը հակասում է Աբրահամ Կիսիբեկյանի[50] և զինվորական կոմիսար Հարություն Թումյանի այն վկայությունը, որ «Մսմնայի տակ թուրքերից խլվել է «Շնեյդեր» սիստեմի լեռնային հրանոթ, որը 1920 թ. մարտին Ասկերանի պաշտպանության ժամանակ դիպուկ կրակով ավերել է ադրբեջանական մարտկոցների շարքերը՝ ունենալով միայն 60 արկ» [51]: Այս մասին նշել է նաև Բագրատ Ուլուբաբյանը, որը, սակայն, չի անդրադարձել տեղեկության հավաստիությանը[52]:

Պատմաբան Հրանտ Աբրահամյանը հենվում է Հարություն Թումյանի[53] հաղորդած այն տեղեկության վրա, որ թշնամիներին «հաջողվում է իրենց հետ տանել գնդացիրները, իսկ թնդանոթն ընկնում է հայերի ձեռքը» [54]: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Գևորգյանը գրում է. «Ջախջախված թշնամին մարտադաշտում թողել է ավելի քան 300 դիակ, երկու թնդանոթ, յոթ գնդացիր. զենք- զինամթերք և տասնյակ գերիներ» [55]:

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատմաբան Գ. Հովհաննիսյանը Մսմնայի ճակատամարտը համարել է «թուրքական օկուպանտների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական ինքնապաշտպանական

պայքարի պատմության մեջ» Արցախի հայ ազգաբնակչության գրած բազմաթիվ «փառավոր էջերից մեկը» [56]:

Բագրատ Ուլուբաբյանն իր ժամանակին հատկանշել է թուրքական Գալիպոլիի դիվիզիայի ջախջախումը Մայիսյան հերոսամարտերի ժամանակ և Մսմնայի տակ, բայց այդ հաղթանակն ավելի է իմաստավորվում Թուրքիայում վերջին տարիներին Գալիպոլիի ճակատամարտի նշանակության արհեստականորեն ուռճացման համապատկերում:

Դեռ թարմ են հիշողությունները 2015 թ. ապրիլին Գալիպոլիի դիվիզիային փառաբանելու և Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարեդարձից առաջադեմ մարդկության ուշադրությունը շեղելու նպատակով Թուրքիայի սարքած շոուի մասին: Այդ առումով հետադարձ հայացք գցելով Մսմնայի ճակատամարտի վրա՝ կարող ենք փաստել, որ այն երիցս կարևորվում է հայ ժողովրդի համար, որովհետև այդտեղ գլխովին ջախջախվել են հենց Գալիպոլիի դիվիզիայի գնդերից մեկի զինվորները: Հուսով ենք, որ այս կարևոր փաստը այսուհետև գիտական շրջանառության մեջ կմտնի մեր պատմագրության մեջ:

Հեղինակների մի մասն իրավամբ Մսմնայի և Մարտակերտի ճակատամարտերը համարել է Մայիսյան հերոսամարտերի շարունակությունը՝ Մսմնան համարելով արցախյան Սարդարապատը:

Մսմնայի ճակատամարտը Արցախում հայ ռազմարվեստի զարգացման և թուրք զավթիչների դեմ պայքարի ավանդույթների շարունակման արտահայտություններից է: Ինչպես հայտնի է, տակավին 1733 թ. մարտին Վարանդայի Ավետարանոց գյուղում օսմանյան զորամասը մելիք Հյուսեինի քույր Աննա-խաթունի գլխավորությամբ ոչնչացվել է[57]: Այդ հնարամտությունը կիրառվել է նաև Մսմնայում՝ թուրքական զորամասի առերես հյուրընկալության տեսքով և հաջորդած կոտորածով: Ի դեպ, Ասլան Շահնազարյանը, հետևելով ավանդության տեղեկություններին և Լեոյի կարծիքին, թուրքերի ոչնչացման մտահղացման հեղինակ ու կազմակերպիչ է համարում Դիզակի մելիք Ավանին[58] Զուգադիպաբար թե օրինաչափորեն Մսմնայի ջարդի մտահղացման հեղինակ է համարել Դիզակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արտեմ Լալայանը: Ռազմարվեստի շարունակականությունը, սկսած Եսայի իշխանից, որը դեռ 9-րդ դարում Դիզակի Գտիչ բերդի տակ ջախջախում էր ազգությամբ թուրք Բուղա զորավարի արաբական բանակը, մինչև Մսմնայի ճակատամարտ, իսկ այնուհետև Արցախյան պատերազմի տարիներին Հադրութի շրջանում մղված հերոսամարտերը ավելի քան ակներև է, ինչը կարևորվում է թշնամու դեմ աննահանջ պայքարելու վճռականության ու առանցքագաղափարի կենսունակության տեսակետից:

Որոշ հեղինակներ, անտեսելով պատմական վավերագրերը և դեպքերի մասնակիցների վկայությունները, հայության մղած հերոսամարտերը համարում են ինքնաբուխ: Այսպես՝ Ռ. Սիմոնյանը գրել է. «Արցախահայության ինքնաբուխ հերոսամարտերի պսակը դարձավ Վարանդայի Մսմնա գյուղի մոտ հոկտեմբերի 19 (կարդալ՝ 18)–ին տեղի ունեցած կռիվը, երբ թուրք–ադրբեջանական կանոնավոր գումարտակները ծանր պարտություն կրեցին հայերից՝ մարտադաշտում թողնելով մեծ թվով զոհեր: Անշուշտ, կարելի էր միաբանված ուժերով ավելի նշանակալի հաղթանակներ տոնել, արգելել հակառակորդի մուտքը երկրամասի խորքերը, սակայն միաբանության դաշտում որոմ էր աճել» [59]:

Սակայն բազմաթիվ փաստեր, որոնց մի մասը մեջբերվել է սույն հոդվածում, ապացուցում են այդ հերոսամարտերի կազմակերպված, ծրագրված ու հրամանատարական բնատուր տաղանդով ղեկավարված լինելու մասին:

Ռազմագիտության տեսանկյունից գնահատելով ճակատամարտի նշանակությունը՝ կարող ենք փաստել, որ Մսմնայի մոտ թուրքական զորաջոկատի ջախջախումը չեզոքացրեց Վարանդայի պաշտպանների թիկունք դուրս գալու թուրքական գնդի զորա-

շարժը, որի նպատակն էր մի քանի օր տևած հրետանային նախապատրաստությունից[60] հետո Կարյագինոյից թուքական ուժերի հարձակմանն աջակցելը, ինչն ի դերև ելավ:

Թուրք զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսամարտերի համապատկերում կարևորելով Մսմնայի ճակատամարտը՝ այդ հիշարժան իրադարձության 80-ամյա հոբելյանն Արցախում պետականորեն, բարձր մակարդակով արժեքավորվել է 1998 թվականին[61], իսկ 2018 թ. արդեն 100-ամյակի առթիվ կազմակերպվել է տոնական միջոցառումների շարք[62]:

Ընդհանրացնելով՝ կարող ենք փաստել, որ Մսմնայի ճատամարտը թեև լուսաբանված է հայ պատմագրության մեջ, սակայն արժանահավատ վավերագրերի և հավաստի տեղեկությունների պակասը դեռևս թույլ չի տալիս վերջնականապես ամբողջացնել այդ պատմական ու ռազմական կարևոր իրադարձության ամբողջական պատկերը, սպառիչ պատասխաններ տալ ականատեսների ու հեղինակների տարակարծությունների հետևանքով առաջացած բազմաթիվ հարցերի, հետևաբար ուսումնասիրությունները դեռևս անհրաժեշտ է շարունակել և պատմագիտության ժամանակակից պահանջներին համապատասխան՝ լուծել այդ գիտական խնդիրը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես Միքայելյան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք» (Բոստոն), 1923, հմ. 7-12, Քիրս Սարոտ, Ղարաբաղի կցումը Ադրբեջանին, «Հայրենիք», 1929, հմ. 8, Նույնի, Տաճիկների մուտքը Ղարաբաղ, «Հուսաբեր» (Կահիրե), 1929, հմ. 235-247, Նույնի, Ղարաբաղի կռիվների շուրջը, «Հայրենիք», 1934, հմ. 5, Իշխանյան Ե., Դեպքերը Ղարաբաղում, «Հայրենիք», 1933, հմ. 11-12, Ստեփանյան Հ., Արցախյան կամ Շուշվա գնդի պատմությունը, «Հայրենիք», 1934, հմ. 1-6, 1935, հմ. 3-7 և այլն:
2. Տես Мелик-Шахназаров З., Записки карабахского солдата, М., 1995, Мурадян В., Отец и отчим, Ереван, 1998, Լեո, Անցյալից, Թ., 1925, Սարգսյան Ա., Հեղափոխական կրակների միջով, Երևան, 1967, Իշխանյան Երևան, Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, Երևան, 1999, Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-1920, Երևան, 2000, Կիսիբեկյան Ա., Հուշեր (2 գրքով), Երևան, 2011 և այլն:
3. Լեո, Սահմանավեճեր. Լոռի-Ախալքալաք-Ղարաբաղ, Թ., 1919, Սարգսյան Երևան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում. 1914-1918, Երևան, 1964, Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, Հովհաննիսյան Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, 1971, Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Երևան, 1996, Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921, Երևան, 1996, Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, Նույնի, Թևան, Երևան, 1998, Նույնի, Արցախի հերոսամարտը (1918), Երևան, 1998, Նույնի, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա (1917-1923), Երևան, 2003, Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը. 1917-1920 թթ., Երևան, 2017 և այլն:
4. Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Ереван, 1992, Արցախը կանչում էր Անդրանիկին(փաստաթղթեր), Երևան, 1995, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, Երևան, 2003 և այլն:
5. Հովհաննիսյան Գ., Մսմնայի ճակատամարտը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, հմ. 3, էջ 152, Նույնի, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, էջ 93-94:

6. Հովհաննիսյան Գ., Մսմնայի ճակատամարտը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, հմ. 3, էջ 150-153:
7. Աբրահամյան Հ., Արցախի հերոսամարտը (1918), Երևան, 1998, էջ 21: Պատմական գիտությունների դոկտոր Վիկտոր Մուրադյանը Քյազիմ-բեյի թնջուկը լուծելն է հետևյալ կերպ. «Կարյագինոյի շրջանի պարետ նշանակված Քյազիմ-բեկը ժամանել էր Շուշի, որտեղից զինված պահակախմբի ուղեկցությամբ պիտի հասներ նշանակման վայր՝ Կարյագինո: Այդ նպատակով կազմավորվել է հատուկ ոոկատ Խոսրով-բեկ Փոլատովի գլխավորությամբ: Բացի Կարյագինոյի նորանշանակ պարետին ուղեկցելը, ջոկատը խնդիր ուներ միանալու Մուղանի դաշտից դեպի Կարյագինո ուղևորված ջոկատի հետ և համատեղ ուժերով հարձակվեին Դիզակի և վարանդայի շրջանների վրա» (Мурадян В., Отец и отчим. Документальная повесть к 80-летию Мсманской битвы в Нагорном Карабахе, Ереван, 1998, с. 24-25):
8. Նույն տեղում:
9. Աբրահամյան Հ., Թուրքական նվաճողների դեմ Ղարաբաղի աշխատավորության մղած պայքարի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, հմ. 2, էջ 162-177, Նույնի, Фидаи Аслан. «Коммунист» (Ереван), 15 апреля 1990 г., Նույնի, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 11-14, Նույնի, Արցախի հերոսամարտը (1918), Երևան, 1998, էջ 19-24, այլևայլ հեղինակների գրածները՝ 26-34 էջերում, Նույնի, Թևան, Երևան, 1998, էջ 7-8, Նույնի, Մարտնչող Արցախը, էջ 74-78 և այլն (նկատելի է, որ նշված էջերում հիմնականում կրկնություններ են):
10. Աբրահամյան Հ., Վավերագրերը Թևան Ստեփանյանի և հարակից հարցերի մասին, «Արցախ», 1990, հմ. 5, էջ 32: Իսկ Եղիշե Իշխանյանը Մսմնայի կռվի ղեկավար է համարել Վարանդայի ուժերի հրամանատարի տեղակալ Արտեմ Պետրոսյանին (տես Իշխանեան Ե., Դէպքերը Ղարաբաղում (Ճշդումներ եւ դիտողութիւններ), «Հայրենիք» (Բոսթոն, ԱՄՆ), 1933, հմ. 12, էջ 117:)
11. Նույն տեղում, էջ 32-33:
12. Նույն տեղում, էջ 33:
13. Աբրահամյան Հ., Թևան, էջ 8:
14. Նույն տեղում, էջ 48:
15. Աբրահամյան Հ., Արցախի հերոսամարտը (1918), էջ 23, Նույնի, Մարտնչող Արցախը, էջ 77:
16. Իշխանեան Ե., Դէպքերը Ղարաբաղում(Ճշդումներ եւ դիտողութիւններ), «Հայրենիք» (Բոսթոն, ԱՄՆ), 1933, հմ. 11, էջ 112:
17. Գասպարյան Վ., Արցախյան Սարդարապատը (մոտենում է Մսմնայի հերոսամարտի 80-ամյակը…), «Ազատ Արցախ», 18 օգոստոսի 1998 թ., հմ. 90: Համացանցի թվայնացված պաշարներում Թիֆլիսում լույս տեսած այդ հանդեսի հիշյալ համարը գտնելու և տեղեկությունը ստուգելու հնարավորություն առայժմ չունենք:
18. Հ., Դէպքերը Շուշում, «Մշակ», 8 նոյեմբերի 1918 թ., հմ. 229, էջ 2:
19. Աբրահամյան Հ., Արցախի հերոսամարտը (1918), էջ 33-34: Ցավոք, այդ թերթի տվյալ համարը Ազգային գրադարանի պարբերական մամուլի թվայնացված շտեմարանում չգտանք:
20. Ղահրիյան Հ., Թևան Ստեփանյան. Առասպել և իրականություն, «Արցախ» (ԽՍՀՄ գրողների միության ԼՂ մարզային կազմակերպության գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական երկամսյա հանդես), 1989, հմ. 1, էջ 43:
21. Աբրահամյան Հ., Արցախի հերոսամարտը (1918), էջ 22:

22. Իրական թվերը տես սույն հոդվածի «Ճակատամարտի արդյունքների մասին» պարբերությունը:
23. Իրականում բանը դրան չի էլ հասել. ինչպես վկայել են ժամանակակիցները՝ թուրքերը տեսնելով հայկական ուժերին, չեն համարձակվել առաջ գնալ և հետ են դարձել ելման դիրքեր:
24. Տես Եսայան Է., «Չափ քաջաց…» (Ասլան Մուրադխանյան), «Մարտիկ», 21-27 մայիսի 1997 թ., հմ. 21, էջ 5:
25. Աբրահամյան Հ., Լեգենդ, որը մոտ է ճշմարտությանը, «Ազատ Արցախ», 9 հունվարի 2007 թ., հմ. 2, էջ 10, Գասպարյան Վ., Արցախյան Սարդարապատը (Մոտենում է Մսմնայի հերոսամարտի 80-ամյակը): «Ազատ Արցախ», 13 օգոստոսի 1998 թ., հմ. 90, էջ 2, Հովսեփյան Ն., Մսմնայի ճակատամարտ. 95-ամյակ: «Ազատ Արցախ», 21 հոկտեմբերի 2003 թ., հմ. 124, էջ 3, Гаспарян В., Мсмнинское сражение. «Азат Арцах», 21 августа 1998 г., N 32, стр. 3, Արցախապատում, գիրք 5: Հերքինագ. Մսմնայի ճակատամարտի հերոսուհին (փաստագրական վիպակ), Ստեփանակերտ, 2015, Мурадян В., Отец и отчим. Документальная повесть к 80-летию Мсманской битвы в Нагорном Карабахе, Ереван, 1998 և այլն:
26. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ.(պատմական ակնարկ), «Խորհրդային Ղարաբաղ», 8 նոյեմբերի 1989 թ., հմ. 255, էջ 3:
27. Այդ մասին նա տեղեկացրել է ԼՂԻՄ մարզային գրադարանի տնօրեն Սուրեն Կարապետյանին հասցեագրած նամակներից մեկում (տես Հարությունյան Յու., Նմուշներ մշակույթի վաստակավոր գործիչ Ս. Ա. Կարապետյանի նամականուց, «Կաճառ» տարեգիրք, գիրք հմ. 7, Շուշի, 2015, էջ 109, վավերագիր հմ. 1):
28. Տես Խանզադյան Ս., Պատմական նշխարներ, «Արցախ», 1990, հմ. 1, էջ 30-38:
29. Տես Խանզադյան Ս., Պատմական նշխարներ, «Արցախ», 1990, հմ. 1, էջ 31:
30. Նույն տեղում:
31. Պատմաբանը հղում է կատարում ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 201, գ. 41, թ. 23-ին (Բաքվի հայկական տեղեկատվական բյուրոյի 1919 թ. փետրվարի հաղորդագրությունը ՀՀ ԱԳՆ. äîê. 55, ñ. 86-87): Զահիդ Զեմալ(Զամալ) բեյը, նույն ինքը՝ Զեհիդ Զեմալ կամ Զեմիլ բեյը կովկասյան թուրքական 1-ին դիվիզիայի հրամանատարն էր 1918 թ. նոյեմբերից իր հրամանները ստորագրում էր որպես 1-ին ադրբեջանական դիվիզիայի հրամանատար (ï»ë «Кавказское слово», 13 ноября 1918 г. մեջբերումն ըստՎ Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов.Отв.ред. В.А. Микаелян, сост. Акопян В. А., Баликян О.С., Вирабян А.С., Микаелян В.А., Эвоян В.С. Ереван, изд. А Армении, 1992, док. 31, стр. 43): Պատմաբան Համլետ Հարությունյանը գրելով, թե «Զեմիլ Զահիդ» բեյը «որոշ աղբյուրներում նշվում է նաև 1-ին դիվիզիայի հրամանատար (ՀՀՊՊԿԱ, ֆ. 221, g. 1, գ. 30, թ. 28)», կարծիք է հայտնել, որ «ճիշտը 2-րդ դիվիզիան է» (տես Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, էջ 40, ծանոթ. 1): Ինչպես երևում է վերոհիշյալ մեջբերումից, Թուրքական 2-րդ դիվիզիայի հրամանատարը ստանձնել էր ադրբեջանական 1-ին դիվիզիայի հրամանատարությունը, ինչպես և այն բազմաթիվ թուրք սպաները, որոնք խախտելով Մուդրոսի պայմանագրի համաձայն Անդրկովկասից անհապաղ հեռանալու պայմանը՝ մնացել ու կազմել են ադրբեջանական բանակի կորիզը և առաջնորդել այդ բանակը Արցախը գրավելու:
32. Տես Հովհաննիսյան Գ., Մսմնայի ճակատամարտը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, հմ. 3, էջ 150:
33. Տես Խանզադյան Ս., Պատմական նշխարներ, էջ 36:

34. Հեյբաթյանն առաջարկում է փոխել ճանապարհը՝ փոխանակ գնալու դեպի Ամարաս՝ գնալ Մուշկապատ-Հաղորտի գյուղերի ուղղությամբ դեպի Խոնաշեն (այժմյան Մարտունին) և այնտեղից խճուղիով անցնել Կարյագինո (տես Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, Երևան, 2011, էջ 342):
35. Տես Կիսիբեկյան Ա., Նշվ. հատորը, նույն տեղում:
36. Տես Ստեփանեան Յ., Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը), «Հայրենիք», 1935, հմ. 7, էջ 122:
37. Իշխանեան Ե., Դէպքերը Ղարաբաղում(Ճշդումներ եւ դիտողութիւններ), «Հայրենիք» (Բոսթոն, ԱՄՆ), 1933, հմ. 11, էջ 92:
38. «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. հմ. 52, գործ հմ. 1, թ. 3բ:
39. Գասպարյան Վ., Արցախյան Սարդարապատը (Մոտենում է Մսմնայի հերոսամարտի 80-ամյակը): «Ազատ Արցախ», 13 օգոստոսի 1998 թ., N 90:
40. Տես Վարսենիկ Մկրտչյանի պատմածի վերաշարադրանքը. Աբրահամյան Հ., Լեգենդ, որ մոտ է ճշմարտությանը, «Ազատ Արցախ», 9 հունվարի 2007 թ., № 2, էջ 10:
41. Մեկ հրանոթ է նշում նաև մեկ այլ ժամանակակից (տես Մելիք-Շահնազարյան Զ., Թուքական ագրեսիան Ղարաբաղում Բաքվի անկումից հետո, «Արցախ», 1990, հմ. 5-6, էջ 26):
42. Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов., док. 28, стр. 50.
43. Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов., док. 61, стр. 97, док. 69, стр. 104, док. 145, стр. 226.
44. Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов., док. 61, стр. 97, док. 121, стр. 195.
45. Տես Արցախը կանչում է Անդրանիկին(փաստաթղթեր), Երևան,1995, փաստաթուղթ հմ. 16, էջ 36, Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 427:
46. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1996, էջ 67:
47. Իշխանեան Ե., Դէպքերը Ղարաբաղում(Ճշդումներ եւ դիտողութիւններ), «Հայրենիք» (Բոսթոն, ԱՄՆ), 1933, հմ. 11, էջ 92:
48. Երկու թնդանոթ է նշել նաև Հովակ Ստեփանյանը (տես Ստեփանեան Յ., Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը), «Հայրենիք», 1935, հմ. 7, էջ 122:
49. Տես Խանզադյան Ս., Պատմական նշխարներ, էջ 36:
50. Տես Կիրիմյան Ա., Աբրահամ Կիսիբեկյանի հուշերը Լեռնային Ղարաբաղի 1919-1920 թթ. Իրադարձությունների մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, հմ. 1, էջ 46:
51. Տես Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-1920 թթ. (պատմական ակնարկ), Երևան, 1966: Մատենադարան, Այլ և այլ հեղինակների արխիվ, թղթապանակ 240[12], g. 74, վավերագիր հմ. 29, էջ 160:
52. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, էջ 227:
53. Տե՛ս Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-1920 թթ. (պատմական ակնարկ), Երևան, 1966: Մատենադարան, Այլ և այլ հեղինակների արխիվ, թղթապանակ 240[12], g. 74, վավերագիր N 29, էջ 160:
54. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա (1917-1923), էջ 78:
55. Տե՛ս Գևորգյան Հ., Մսմնայի ճակատամարտը, «Հայ զինվոր» (ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ), 18-24 հոկտեմբերի 2017 թ., հմ. 41. հմմտ.՝ http://www.hayzinvor.am/50231.html (վերջին դիտում՝ 03.10.2018 թ.):
56. Տես Հովհաննիսյան Գ., Մսմնայի ճակատամարտը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, հմ. 3, էջ 150:

57. Շահնազարյան Ա., Մելիքի աղջիկը (պատմական ակնարկ), Երևան, 1944, էջ 27-28: Լեոյի «Մելիքի աղջիկը» վեպի հիմքում ևս այս պատմական դեպքն է:
58. Նույն տեղում, էջ 30:
59. Սիմոնյան Ռ., Անդրանիկ. սիբիրական վաշտի ոդիսականը, Երևան, 2006, էջ 107:
60. Տե՛ս Խանզադյան Ս., Պատմական նշխարներ, «Արցախ», 1990, հմ. 1, էջ 31:
61. Տե՛ս Միքայելյան Դ., Նշվեց Մսմնայի ճակատամարտի 80-ամյակը, «Ազատ Արցախ», 20 հոկտեմբերի 1998 թ., հմ. 119, էջ 1:
62. Մսմնայի ճակատամարտի 100-ամյակին նվիրված տոնական միջոցառում, http://gov.nkr.am/hy/official-news/item/2018/10/18/100amyak/(վերջին դիտում՝ 10.10.2019 թ.):

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մսմնայի ճակատամարտի լուսաբանումը հայ պատմագրության մեջ

Միեր Հարությունյան

Թուրք զավթիչների Այսրկովկասում ունեցած ռազմաքաղաքական ներկայության պայմաններում Արցախում հայ ազգաբնակչության ինքնապաշտպանական մարտերը, այդ թվում՝ Մսմնայի ճակատամարտը հայ պատմագրությունը ներկայացրել է որպես փրկության փարոս և Հայրենիքը պաշտպանելու վառ օրինակ:

Դեպքերի ականատեսների ու Արցախի ինքնապաշտպանության գործի կազմակերպիչների կամ մասնակիցների հուշագրություններում Մսմնայի ճակատամարտի մասին տեղեկությունները հաճախ հակասական են, որոնք հետագայում ժառանգություն են մնացել հայ պատմագրությանը: Հոդվածում փորձ է արվել մեկդարյա հեռավորությունից ընդհանրացնելու Մսմնայի ճակատամարտի պատմագրության հիմնահարցերը և հրապարակված հիմնական նյութի պատմաքննական վերլուծությամբ հնարավորինս հստակեցնելու այդ իրադարձության ամբողջական պատկերը:

РЕЗЮМЕ

Освещение Мсмнинской битвы в армянской историографии

Мгер Арутюнян

Ключевые слова: Мсмна, турецкие захватчики, Арцах, армянская историография, Аслан Мурадханян, сражение, Артем Лалаян, военное искусство, маневр, научная задача.

Самооборонительные бои в условиях военно-политического присутствия турецких захватчиков в Закавказье, в том числе Мсмнинскую битву армянского населения в Арцахе, армянская историография представила как маяк спасения и яркий пример защиты Родины.

В воспоминаниях очевидцев, организаторов и участников самообороны Арцаха сведения о Мсмнинской битве часто противоречивые, и они в дальнейшем передавались в наследство армянской историографии. В статье предпринята попытка обобщить основные вопросы историографии Мсмнинской битвы и создать по мере возможности целостную картину посредством историко-критического анализа опубликованного базового материала об этом событии вековой давности.

SUMMARY
Msmna Battle Coverage in Armenian Historiography
Mher Harutyunyan

Keywords: Msmna, Turkish invaders, Artsakh, Armenian historiography, Aslan Muradkhanyan, battle, Artem Lalayan, military art, maneuver, scientific task

Self-defensive battles in the conditions of the military-political presence of Turkish invaders in Transcaucasia, including the Battle of Msmna of the Armenian population in Artsakh, were presented by Armenian historiography as a beacon of salvation and a vivid example of the defense of the Motherland.

In the recollections of eyewitnesses, organizers and participants of Artsakh self-defense, the information about the Battle of Msmna is often contradictory, and they were later transferred to the legacy of Armenian historiography. The article attempts to summarize the main issues of the historiography of the Battle of Msmna and to create, as far as possible, a holistic picture by means of a historical and critical analysis of the published basic material about this century-old event.